

ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱՄԱԿԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԵՎ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա., ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Վեհափառ Տե՛ր.

Այսու որդիական պարտք ենք համարում Ձերդ Վեհափառությանը խոնարհաբար հաղորդելու, որ Թեհրանի բեմի Պատգամավորական ժողովը, սույն թվականի փետրվարի 26-ին գումարած իր հերթական նիստում քննության առնելով Ս. Էջմիածնի Մայր Աթոռի և Թեհրանի բեմի փոխհարաբերությունների խնդիրը, հանգեց այն եզրակացության, որ Իրանի փոքրամասնության կրոնական պետերի և պատվիրակների նկատմամբ, Իրանի Նախարարաց խորհրդի 1949 թվականի հուլիսի 25-ի, Ձերդ Վեհափառությանը ծանոթ, որոշումից ի վեր, Թեհրանի բեմի և Ս. Էջմիածնի Մայր Աթոռի հարաբերություններն ունեցել են միայն ձևական և անվանական բնույթ: Միաժամանակ, նկատի ունենալով Թեհրանի բեմի համար ստեղծված խիստ բացառիկ պայմանները և մեր եկեղեցու անվտանգությանը կապված որոշ մտահոգություններ, ինչպես և մի շարք այլ հիմունքներ, Պատգամավորական ժողովն իր վերոհիշյալ նիստում միաձայնությամբ որոշեց՝ դադարեցնել Ս. Էջմիածնի Մայր Աթոռի հետ ունեցած ձևական կապն ևս և խնդրամատույց լինել Մեծի Տանն Կիլիկիո Ս. Աթոռին՝ Թեհրանի բեմն առնելու իր հովանու ներքո:

Մատչելով ի համբույր Ձերդ Վեհափառության Ս. Աջույն, մնամք խորին հարգանքո՝

Թեհրանի հայոց Թեմական խորհրդի ատենապետ՝
դոկտ. Ա. ԲԱԲԱԼՅԱՆ

ԹԵՀՐԱՆ,
29 մարտի 1958 թ.
№ 165/25

ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ

ԹԵՀՐԱՆ

Ապրիլի 22-ին ստացանք Ձեր 29 մարտի նամակը:

Մայր Աթոռը չի կարող համաձայն լինել Ձեր որոշման: Ոչ ոք իրավասություն չունի հայ եկեղեցիների և հավատացյալների հոգևոր կապը կտրել Ս. Էջմիածնից: Մենք պիտի գրենք Ձեզ, Մեր խոսքը ուղղելով Թեմական ժողովիդ և իրանահայ ժողովրդին:

Ի հարկին Մենք պիտի դիմենք նաև Իրանի բարեխնամ կառավարության:

Մինչ այդ, մնացե՛ք խաղաղ և լավատես և մի՛ կատարեք որևէ ձեռնարկ՝ դիմելու այլ եկեղեցական կենտրոնի:

Մենք վստահ ենք, թե ամեն դժվարություն կհաղթահարվի և Ս. Էջմիածինը, իբրև հոգևոր կենտրոն, իր դարավոր հովանին կպահպանե Իրանի դրացի և բարեկամ պետության մեջ գործող հայ եկեղեցիների վրա, հարգելով իրանական պետական օրենքները ու շահերը:

Իրանի հայ թեմերը, ինչպես անցյալում դարեր շարունակ, կան ու կմնան նաև այսուհետև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր իշխանության ներքև:

Կնաջորդե նամակը:

Լսեցե՛ք Էջմիածնի սուրբ ձայնը և ընդունեցե՛ք Աստուծո և Մեր հայրապետական օրհնությունը:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

24 ապրիլի 1958 թ.
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ